

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՆՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ
ՄԱՆՈՒԿՅԱՆ-ՏԵՄԻՐՃՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ՆԻՄՆԱԴՐՄԱՆ 30-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՅ
ԱՌ ՆԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՆԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ
ՄԱՆՈՒԿԵԱՆ-ՏԵՄԻՐՃԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆ,
ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ, ԱՄՆ**

ԱՄՆ հայոց Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տեր-
պէրեանից գոհունակութեամբ փեղեկացանք, որ այս փարի նշուելու է ՆԲԸ Միութեան Մա-
նուկեան-Տեմիրճեան վարժարանի հիմնադրման եւ ազգօգուտ գործունէութեան 30-րդ փա-
րեդարձը:

Միացեալ Նահանգներում հասարակութեամբ հայ համայնքի պատմութիւնը արդիւնաւոր-
ւած է ազգօգուտ եւ եկեղեցանուէր բազմաթիւ իրագործումներով: Աւերարանը իբրեւ հայր
եւ Եկեղեցին իբրեւ մայր խոստովանող մեր ժողովրդի զաւակները, ապաւինելով Բարձրեա-
լի ամենախնամ ողորմածութեանը, ամեն ջանք գործադրեցին եւ շարունակում են գործա-
դրել՝ ամուր պահելու եւ առաւել շէնացնելու իրենց ազգային եւ հոգեւոր կեանքը: Նախընթաց
փաստանախնայների ընթացքին Միացեալ Նահանգների հիւրընկալ հողի վրա, ի գին հայորդ-
եաց սրբաբուխ գոհողութիւնների հիմնադրուել են բազմաթիւ Եկեղեցիներ ու Ազգային
վարժարաններ, որոնք յաջողութեամբ շարունակում են իրենց յարկերի ներքոյ միաւորել
մեր ժողովրդի զաւակներին եւ նրանց հոգու հայեացքները ուղղել դէպի Նայրենի մեր եր-
կիրն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Բարձրեալի կամքով ու առաջնորդութեամբ անցեալ փարի ԱՄՆ հայոց Արեւմտեան
թեմ կապարած Նովուապեպական այցի ընթացքին առիթ ունեցանք լինելու նաեւ Մանուկ-
եան-Տեմիրճեան Ազգային վարժարանում: Մենք սիրով ենք յիշում մաքաղ սերնդի հայեցի
դասարարականութեան ու մայրենի լեզուի պահպանման նկատմամբ կրթօջախի պատասխա-
նապունների աննուազ նախանձախնդրութիւնը: Վարժարանն, արդարեւ, «ծաղկեալ այգի» է
ամերիկահայ համայնքում, որ գիտութեան լոյսը մաքուրակելու հետ միասին մեր ժողովրդի
զաւակներին սնում ու կրթում է սահակ-մեսրոպեան դպրոցից սկիզբ առնող մեր սրբազան
արժէքներով, նրանց հոգիներում կերպում հայրենասիրութեան ու եկեղեցասիրութեան ոգի ու
ծառայութեան կամք:

Նամայն հայութեան հոգեւոր սրբազան կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Նայրա-
պեպական Մեր օրհնութիւնն ու գնահատանքն ենք յղում վարժարանի փեսչական եւ ու-
սուցչական կազմին, Խնամակալութեան անդամներին եւ կրթօջախի գործունէութեանը
իրենց աջակցութիւնը բերող բոլոր հայորդիներին: Թող Աստուած շնորհազարդի Ձեզ եւ

հանապազ օրինի Ձեր բոլոր ջանքերը՝ առաել զօրացնելու և ծաղկեցնելու ՆԲԸ Միութեան Մանուկեան-Տեմիրճեան վարժարանը:

Ուրախ ենք Նայրապետական Մեր սերն ու օրհնութիւնը բերելու նաև Ձեզ, սիրելի սաներ: Մեր յորդորն է, որ միշտ ժրաջան լինէք ուսման մէջ և որդիաբար սիրէք անկախ մեր Նայրենիքն ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, որպէսզի ապագային Ձեր գործերով պայծառանայ ազգային մեր կեանքը և առաել բարձրանայ վարկը նուիրական Ձեր կրթօջախի ու բարի համբաւը՝ մեր ժողովրդի:

Նայրապետիս աղօթքն է, որ Նայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Մանուկեան-Տեմիրճեան վարժարանը Բարձրեալն Աստուծոյ բարեխնամ հովանու ներքոյ շարունակի իր երախտարժան գործունէութիւնը և միշտ առապ հունձք մասրուցի հաւաքաւոր մեր ժողովրդին:

Շնորհք, սէր և ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեւեան. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ

Տուալ Գիրս Օրհնութեան ի 28-ն Փետրուարի
յամի Տեառն 2006 և ի թուին հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 630